

ՀԱՎԵԼՎԱԾ  
Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
որակավորման հանձնաժողովի  
10.10.2019թ. N 9-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահ՝  
Արա Զոհրաբյան

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(նոր խմբագրությամբ)

1. 2019 թվականի աշնան որակավորման քննությանը մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների (շրջանավարտների, այսուհետ՝ հավակնորդներ) կողմից առձեռն կարող են ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատ մինչև 2019թ. **հոկտեմբերի 22-ը** (ներառյալ) ժամը 10:00-ից մինչև ժամը 18:00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննությունն անցկացվելու է ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական շենքում՝ երկու փուլով:
3. Առաջին փուլի քննությունը քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հավակնորդների համար սկսվելու է 2019 **թվականի հոկտեմբերի 29-ին** ժամը 10:00-ից, իսկ քրեաիրավական ուղղվածության հավակնորդների համար՝ 2019 **թվականի հոկտեմբերի 31-ին** ժամը 10:00-ից: Քննության համար հավակնորդների գրանցումը կատարվելու է նույն օրերին՝ ժամը 09<sup>00</sup>-ից մինչև 09<sup>45</sup>:
4. Երկրորդ փուլի քննությունն անցկացվելու է 2019 **թվականի նոյեմբերի 15-ին կամ 16-ին**՝ յուրաքանչյուր հավակնորդի համար լրացուցիչ սահմանվող օրը և ժամին:
5. Հավակնորդը քննությանը պետք է ներկայանա ժամանակին և անձը հաստատող փաստաթղթով: **Ուշացած կամ առանց անձը հաստատող փաստաթղթի ներկայացած հավակնորդին չի թույլատրվի մասնակցել քննությանը:**